# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 17.02.2026 թվականին կնքված N ՀԱԳ-ԳՀԾՁԲ-26/1 գնման պայմանագրի

ք. Երևան «14» ապրիլի 2026թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ա. Զոլյանի, որը գործում է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «ՔԻՆԳ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Դ. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 17.02.2026թ. կնքված N ՀԱԳ-ԳՀԾՁԲ-26/1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

Պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, հաստատել ըստ սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

Պայմանագրի թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, հաստատել ըստ սույն համաձայնագրի թիվ 2 հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները կցվում են սույն համաձայնագրին և հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ | «ՔԻՆԳ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ |
| ՀՀ, ք.Երևան, Տերյան փող. 72 | ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10 փող., 13/2 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018001538 | Հ/Հ 1570079571760100 |
| ՀՎՀՀ՝ 01506092 | ՀՎՀՀ՝ 00191157 |
| Տնօրեն՝ Ա. Զոլյան | Տնօրեն՝ Դ. Հովհաննիսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«17» փետրվարի 2026թ. կնքված
ՀԱԳ-ԳՀԾՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի
«14» ապրիլի 2026թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | 98111121/1 | անվտանգության ապահովման ծառայություններ (պահնորդական ծառայություններ) | դրամ | 7328000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Տերյան 72 | 01.09.2026թ.-31.12.2026թ-ը ներառյալ |

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կատարողի կողմից պետք է իրականացվի «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀԱԳ) կարիքների համար Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքի համաձայն պահնորդական ծառայությունների մատուցում:

1. **Պահպանության իրականացման եղանակը**.
   - ➢ Պահնորդական ծառայությունն իրականացվելու է թվով երկու պահակակետում հետևյալ կերպ՝
   - Թիվ 1 պահակակետում շուրջօրյա պահպանություն, շաբաթական յոթ օր, քսանչորս ժամ, առանց բացառության՝ այդ թվում, հանգստյան, տոնական և հիշատակի օրերի ընթացքում, ընդ որում 09:00-21:00-ն ընկած ժամանակահատվածում առնվազն երկու պահնորդի միջոցով, որից մեկը (ֆիզիկական պահպանություն՝ ստատիկ), երկրորդը շրջիկ (ֆիզիկական պահպանություն՝ շարժական), իսկ 21:00-09:00-ն ընկած ժամանակահատվածում առնվազն երկու պահնորդի միջոցով (ֆիզիկական պահպանություն՝ ստատիկ),
   - Թիվ 2 պահակակետում տասներկու ժամյա (09:00-21:00-ն ընկած ժամանակահատվածում) պահպանություն առնվազն մեկ պահնորդի միջոցով (ֆիզիկական պահպանություն՝ ստատիկ), շաբաթական յոթ օր, առանց բացառության՝ այդ թվում, հանգստյան, տոնական և հիշատակի օրերի ընթացքում:
   - ➢ Կատարողը պետք է ունենա ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա:
   - ➢ Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում, զենք կրելու թույլտվություն և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով: Կազմակերպությունը ևս պետք է ունենա զենք և փամփուշտներ պահելու և օգտագործելու թույլտվություն: Ծառայություն իրականացնող բոլոր պահնորդներին անհրաժեշտ է հանդերձավորել համապատասխան արտահագուստով (գարուն-ամառ, աշուն-ձմեռ):
   - ➢ Պահպանությունը պետք է իրականացվի ՀՀ, ք. Երևան, Տերյան 72 հասցեում՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին պատկանող շենքերի և այդ շենքերի սպասարկման և օգտագործման համար նախատեսված ցանկապատված ընդհանուր տարածքում:
2. **Կատարողը պետք է պահպանություն իրականացվող տարածքում**.
   - ➢ Անհապաղ կանխարգելի, կանխի, կասեցնի խափանի կատարվող կամ կատարված իրավախախտումները, Պատվիրատուի գույքի և տարածքի նկատմամբ իրականացվող ոտնձգությունները կամ դրանց համար վտանգ ստեղծող գործողությունները: Պահնորդի կողմից ահազանգի, անվտանգության համակարգի և/կամ ահազանգման ոտնակի (կոճակի) յուրաքանչյուր ակտիվացման դեպքում, Կատարողի արագ արձագանքման խումբը պարտավոր է ժամանել Օբյեկտ և ըստ հնարավորության անմիջապես զանգահարել Կատարողի շուրջօրյա գործող Կառավարման Կենտրոն՝ զեկուցելով ժամանման պահին առկա վիճակը:
   - ➢ Ընդունել և արագ արձագանքել Օբյեկտի անվտանգությանը սպառնացող կանչերին, ինչպիսիք են, օրինակ՝ կարգուկանոնի խախտումները, աշխատակիցների, ընթերցողների և հյուրերի ոչ պատշաճ կամ իրավախախտ վարքագիծը և այլն, նման դեպքերում կիրառել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, ձեռնարկել անմիջական գործողություններ, կանխել ոչ իրավաչափ և անօրինական գործողությունները Օբյեկտի ներսում և ըստ Օբյեկտի ղեկավարի պահանջի միջամտել ծագած վիճաբանություններին՝ հնարավոր իրավաչափ միջոցներով հարթելով ստեղծված իրավիճակը:
   - ➢ Ապահովի տարածքում հասարակական կարգի պահպանումը, արագ արձագանքի և գրանցի ներօբյեկտային կարգուկանոնին և անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի դրանց վերացման համար:
   - ➢ Առանց Պատվիրատուի գրավոր թույլտվության չթույլատրի նյութական արժեքների և դրամական միջոցների տեղաշարժը և պահպանություն իրականացվող տարածքից դրանց դուրսբերումը:
   - ➢ Կատարողը Ծառայությունների մատուցումը կազմակերպում և իրականացնում է Պատվիրատուի հետ համաձայնեցված և հաստատված կարգով ու պայմաններով, 'Օբյեկտում սահմանված՝ Պատվիրատուի ներօբյեկտային, անցագրային և այլ ներքին կարգապահական կանոններին համապատասխան, ներառելով պայմանագրով և սույն տեխնիկական բնութագրով նախատեսված պարտավորությունները, դրանց կատարման ձևն ու կարգը:

- Կատարողի կողմից պետք է ապահովվի իր պահնորդների հրահանգավորումը՝ սույն տեխնիկական բնութագրի և ոլորտը կարգավորող նորմերի վերաբերյալ, յուրաքանչյուր պահնորդի առաջին աշխատանքային օրվա սկզբում և հաջորդաբար յուրաքանչյուր հերթափոխին:
- Կատարողը կրում է նյութական պատասխանատվություն սույն տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ չմատուցելու կամ թերի մատուցելու, իր աշխատակիցների՝ այդ թվում պահնորդների կողմից իրավախախտումներ թույլ տալու, պատշաճ պահպանություն չիրականացնելու, դիտավորյալ կամ անփույթ այնպիսի գործողություն կատարելու դեպքում, որը կհանգեցնի պայմանագրի դրույթների խախտմանը և սույն տեխնիկական բնութագրին անհամապատասխան ծառայության իրականացմանը:
- Ապահովի պահնորդների հերթափոխի հանձնում-ընդունումը՝ արձանագրելով պայմանագրով և սույն տեխնիկական բնութագրով նախատեսված պարտականությունների կատարման, խախտման կամ թերակատարման փաստը:

3. ***Պահպանությունը իրականացնող պահնորդը պետք է տիրապետի իրեն վերապահված պարտականություններին և ապահովի հետևյալ պարտականությունների կատարումը՝***
   - Պահպանվող տարածքում անվտանգության գործառույթները իրականացնի՝ համաձայն ՀԱԳ ներքին կանոնակարգի կամ ղեկավարի հանձնարարության:
   - Արտակարգ իրավիճակների ժամանակ անհապաղ ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ և այդ մասին անմիջապես տեղեկացնի պահպանվող տարածքի ղեկավարին, պահնորդական ընկերության ղեկավարին, իրավապահ մարմիններին և ըստ անհրաժեշտության համապատասխան պետական մարմիններին, օժանդակի պահպանվող օբյեկտի ղեկավարությանը՝ վտանգը չեզոքացնելու կամ դրա հետևանքները վերացնելու կամ նվազեցնելու հարցում: Նշված իրավիճակների ժամանակ առաջին իսկ հնարավորության դեպքում ներկայացնի զեկուցագրեր՝ ներառելով միջադեպերի իրավախախտումների, պատահարների օրվա, ժամի, ձեռնարկած միջոցների և այլ վերաբերելի փաստերի վերաբերյալ տեղեկատվություն:
   - Իրականացնի անվտանգության անհրաժեշտ միջոցառումներ ՀԱԳ աշխատակիցների, հյուրերի և ընթերցողների մուտք/ելքի ժամանակ:
   - Կատարի ամենօրյա շրջայց շենքի ներսում և շենքից դուրս գտնվող դրա սպասարկման տարածքում, առնվազն օրական 5 անգամ և հերթափոխի հանձնման-ընդունման ժամանակ, նշվածի մասին գրառում կատարելով, իսկ խախտումների առկայության դեպքում այդ մասին զեկուցագիր ներկայացնելով:
   - Իրականացնի պահպանվող տարածքի դռների բանալիների հսկողություն՝ դրանք հանձնելով միայն լիազորված անձանց:

4. **Կատարողի և պահնորդի նյութական պատասխանատվության հիմքերը.**
   - Կատարողը և պահնորդը համապարտ պատասխանատվություն են կրում ինչպես ծառայությունները մատուցելուց առաջ առկա ամբողջ գույքի, այնպես էլ հետագայում Պահպանության տարածք տեղափոխված ցանկացած գույքի վերաբերյալ, ֆիզիկական անվտանգությունն ապահովելու եղանակով:
   - Կատարողը և պահնորդը կրում են համապարտ պատասխանատվություն՝ Պահնորդի կողմից իր պարտականություններն անբարեխիղճ կամ անփույթ կատարելու դեպքում, որը հանգեցրել է Պատվիրատուի գույքի վնասմանը, ոչնչացման կամ դրա կորստին, այդ գույքի շուկայական արժեքին համապատասխան:
   - Պահորդը պատասխանատվություն է կրում ՀԱԳ աշխատակիցների, ընթերցողների և այցելուների մոռացված, կորսված և այլ կերպ Պահպանության տարածքում, տեսանելի վայրում, առանց հսկողության թողնված գույքի համար, որը ոչնչացել, վնասվել կամ կորսվել է ոչ աշխատանքային ժամերին:
   - Կատարողը և պահնորդը համապարտ պատասխանատվություն են կրում Պահպանության տարածքում՝ դռների կնիքների առկայության համար (որոնք կնքվում են ՀԱԳ համապատասխան ներկայացուցչի կողմից):

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ | «ՔԻՆԳ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ |
| ՀՀ, ք.Երևան, Տերյան փող. 72 | ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10 փող., 13/2 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018001538 | Հ/Հ՝ 1570079571760100 |
| ՀՎՀՀ՝ 01506092 | ՀՎՀՀ՝ 00191157 |
| Տնօրեն՝ Ա. Զոլյան | Տնօրեն՝ Դ. Հովհաննիսյան |
| ----------------------- (ստորագրություն) Կ.Տ. | ----------------------- (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 2
«17» փետրվարի 2026թ. կնքված
ՀԱԳ-ԳՀԾՁԲ-26/1 ծածկագրով պայմանագրի
«14» ապրիլի 2026թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98111121/1 | անվտանգության ապահովման ծառայություններ (պահնորդական ծառայություններ) | - | - | - | - | - | - | - | - | 1832000 | 3664000 | 5496000 | 7328000 | 7328000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՊՈԱԿ
ՀՀ, ք.Երևան, Տերյան փող. 72
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001538
ՀՎՀՀ՝ 01506092
Տնօրեն՝ Ա. Զոլյան

--------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ՔԻՆԳ ՄԱՐՇԱԼ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10 փող., 13/2
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570079571760100
ՀՎՀՀ՝ 00191157
Տնօրեն՝ Դ. Հովհաննիսյան

--------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.